# Rafting in Armenia

Rafting in Armenia-ն 2017 թվականից զբոսաշրջային ռաֆտինգ ծառայություն է մատուցում Լոռու մարզի Թումանյան համայնքում:

4,5 տարվա ընթացքում Հայկական ռաֆտինգի մասին իմացել և օգտվել են աշխարհի 18 պետությունից հայաստան ժամանած զբոսաշրջիկներ,մեր մասին ինֆո է տպագրվել ֆրանսիական ամսաթերթում,հայտնի ճանապարհորդական գայդ բուքում:Իսկ մեր ընկերության համագործակցության արդյունքում Թումանյան ,Ալավերի,Օձուն,Դսեղ,Դեբեդ համայնքներում գտնվող հյուրանոցները և հյուրատները,այդ թվում նաև ռեստորանները ընդունել հաճախորդներ:

Այս համայնքներից մեզ մոտ ունենք աշխատակիցներ,թիրախում են սոցիալապես անապահով ընտանիքները:Մենք նոր նախագիծ ենք սկսել որի շրջանակներում ԼՈռու մարզի Դեբեդ գետի մի հատվածը շուտով կլինի հատուկ պահպանվող տարածք,որի շնորհիվ աղբի ցանցեր են տեղադրվելու գետի սկզբնամասում և մայրուղուց երևացող հատվածում,գետի ամբողջ ավազանը մաքրվելու է աղբից,որի արդյունքում էլ ռաֆտելու ամբողջ հատվածը կլինի մաքուր,իսկ անտառածածկ հատվածը դարձնելու ենք ԼՈռվա նկարիչների նկարների ցուցասրահ բաց երկնքի տակ,որտեղ կարող են յցելել միայն ռաֆտով,որն էլ ավելի գրավիչ կդարձնի Դեբեդի ավազանը,և մենք մեր օրինակով Հայաստանի մյուս համայնքների բնակիչների հաար օրինակելի կլինենք,որպեսզի նրանք էլ իրենց համայնքներում գտնվող գետերի ավազանները մաքրեն և չաղտոտեն:

Ռաֆտինգ ծառայության շնորհիվ ստեղծում ենք Ռաֆտինգաշեն անվանմամբ քաղաք,որտեղ լինելու է ռաֆտ գույքի արտադրություն,ռաֆտինգի միջազգային դպրոց,լողավազան որտեղ այս բոլոր համայնքների երեխաների համար անվճար լողի դասեր են կազմակերպվելու և ռաֆտի դպրոցում անվճար սովորելու են այս համայնքների երեխաները:Ռաֆտինգաշենը լինելու է ռաֆտինգասերների քաղաքը,իսկ այս քաղաքի ամբողջական ավարտին պես մենք ունենալու ենք 120 աշխատատեղ բարձր աշխատավարձով:

https://www.youtube.com/watch?v=slfxiF0Vras&t=111s

https://www.youtube.com/watch?v=k6s4whackQ0&t=25s

https://www.youtube.com/watch?v=Z1HAHAMy4fw&t=11s

https://www.youtube.com/watch?v=F5TD1NgTkd0&t=9s